մերժման, իսկ Հայցվորների կողմից նախապես 350,000.00 ՀՀ դրամի չափով վճարվել է պետական տուրքի գումարը, Դատարանը եզրահանգում է, որ դատական ծախսերի հարցը պետք է համարել լուծված:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 191, 192 և 234.12 հոդվածներով, Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

«Սեյսմշին» ՍՊ ընկերության և «Ծին նախագիծ» ՍՊ ընկերության հայցն ընդդեմ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի՝ գնահատող հանձնաժողովի թիվ 5 արձանագրության 3-րդ կետի 3.1-րդ ենթակետով կատարած արձանագրումն անվավեր ճանաչելու, որպես անվավերության հետևանք գնահատող հանձնաժողովի թիվ 5-րդ արձանագրության 4-րդ կետի 4.1-րդ ենթակետով կայացված որոշումն անվավեր ճանաչելու, գնահատող հանձնաժողովի 16.08.2024թ. գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշումն անվավեր ճանաչելու, թիվ ՀՏՁՀ-ՎՉԱՓ-ԽԲՄ-ԾՁԲ-2024/5 ծածկագրով բաց մրցույթ շրջանակում «Սեյսմշին» ՍՊԸ և «Ծին նախագիծ» ՍՊԸ կոնսորցիումի հայտը բավարար գնահատելու մասին որոշում կայացնելուն պարտավորեցնելու և գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու մասին 27.08.2024թ. որոշումն անվավեր ճանաչելու պահանջների մասին, մերժել:

Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակելու օրվանից մեկամսյա ժամկետում:

Դատավոր՝ **Գրիգորի Վարդանյան**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am